

**Պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական ընկերությունների քաղաքացիական պատասխանատվությունը սահմանափակելու վերաբերյալ Խորհրդի 2008 թվականի հունիսի 5-ի առաջարկություն (ծանուցված՝ թիվ C(2008) 2274 փաստաթղթի համաձայն) Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ**

*Պաշտոնական տեղեկագիր L 162, 21.06.2008թ., էջեր 0039 - 0040*

Պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական ընկերությունների քաղաքացիական պատասխանատվությունը սահմանափակելու վերաբերյալ Խորհրդի 2008 թվականի հունիսի 5-ի առաջարկություն (ծանուցված՝ թիվ C(2008) 2274 փաստաթղթի համաձայն) Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ (2008/473/ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 211-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը,

Քանի որ

1) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի մայիսի 17-ի՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունների ու համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի մասին 2006/43/ԵՀ հրահանգը, որով փոփոխություններ են կատարվում Խորհրդի 78/660/ԵՏՀ և 83/349/ԵՏՀ հրահանգներում և ուժը կորցրած է ճանաչվում 84/253/ԵՏՀ հրահանգը, սահմանում է պարտադիր աուդիտի պայմանների նվազագույն ներդաշնակեցում: Այդ հրահանգի 31-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովը պետք է հաշվետվություն ներկայացնի եվրոպական կապիտալի շուկաների պարտադիր աուդիտ իրականացնելու նկատմամբ սահմանված պատասխանատվության ազգային նորմերի ազդեցության մասին, ինչպես նաև պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական ընկերությունների ապահովագրության պայմանների մասին և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնի առաջարկություններ,

2) կապիտալի շուկաների անխափան գործունեությունն ապահովելու համար պահանջվում է աուդիտ իրականացնելու կարողությունների կայուն մակարդակ և աուդիտորական ծառայությունների համար մրցունակ շուկա՝ աուդիտորական ընկերությունների բավարար ընտրությամբ, որոնք կարող են և ցանկանում են պարտադիր աուդիտ իրականացնել այն ընկերություններում, որոնց արժեթղթերը թույլատրվել են անդամ պետության կարգավորվող շուկայում շրջանառվելու համար: Այնուամենայնիվ, ընկերությունների շուկայական կապիտալացման աճող անկայունությունը հանգեցրել է պատասխանատվության շատ ավելի մեծ ռիսկերի, մինչդեռ նման աուդիտի հետ կապված ռիսկերի համար ապահովագրական ծածկույթի ձեռքբերումն աստիճանաբար սահմանափակվում է,

3) հաշվի առնելով այն, որ անսահմանափակ համապարտ պատասխանատվությունը աուդիտորական ընկերություններին և ցանցերին կարող է խոչընդոտել Համայնքում ցուցակված ընկերությունների՝ միջազգային աուդիտորական շուկա մուտք գործելը, այդ ընկերություններում պարտադիր աուդիտ իրականացնող աուդիտորական նոր ցանցերի առաջացումը քիչ հավանական է,

4) հետևաբար, ցուցակված ընկերությունների պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական ընկերությունների՝ ներառյալ համախմբված հաշիվների աուդիտ իրականացնող անձանց պատասխանատվությունը, պետք է սահմանափակվի: Այնուամենայնիվ, պատասխանատվության ցանկացած սահմանափակում արդարացված չէ՝ աուդիտորի կողմից մասնագիտական պարտականությունները դիտավորյալ խախտելու դեպքում և այդպիսի դեպքերում չի կիրառվում: Այդ սահմանափակումը չի հակասում նաև վնաս կրած որևէ կողմի՝ վնասի արդարացի փոխհատուցման իրավունքին,

5) անդամ պետություններում քաղաքացիական պատասխանատվության համակարգերի միջև առկա զգալի տարբերությունների առումով, այս փուլում նպատակահարմար է, որ յուրաքանչյուր անդամ պետություն կարողանա ընտրել իր քաղաքացիական պատասխանատվության համակարգի համար ամենահարմար սահմանափակման մեթոդը,

6) անդամ պետությունները համապատասխանաբար պետք է կարողանան սահմանել ազգային իրավունքի համաձայն աուդիտորների պատասխանատվության շեմը: Որպես այլընտրանք՝ անդամ պետությունները պետք է կարողանան սահմանել ազգային իրավունքի համաձայն համաչափ պատասխանատվության համակարգ, ըստ որի, պարտադիր աուդիտ իրականացնող անձինք և աուդիտորական ընկերությունները պատասխանատվություն են կրում միայն պատճառված վնասի իրենց մասով՝ այլ կողմերի հետ համապարտ պատասխանատվություն չկրելով: Այն անդամ պետություններում, որտեղ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց դեմ բողոքներ կարող է ներկայացնել միայն աուդիտի ենթարկված ընկերությունը և ոչ թե առանձին բաժնետերերը կամ այլ երրորդ անձինք, անդամ պետությունը պետք է նաև կարողանա թույլ տալ ընկերությանը, ընկերության բաժնետերերին և աուդիտորին սահմանել աուդիտորների պատասխանատվության սահմանափակումը՝ աուդիտի ենթարկված ընկերությունում ներդրողների համար ապահովելով պատշաճ երաշխիքներ,

ՍՈՒՅՆՈՎ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է.

### ***Կարգավորման առարկան***

1. Սույն Առաջարկությունը առաջարկությունը կարգավորում է անդամ պետությունում գրանցված և անդամ պետության կարգավորվող շուկայում շրջանառության համար թույլատրված արժեթղթեր ունեցող ընկերության համախմբված ֆինանսական կամ տարեկան ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական ընկերությունների քաղաքացիական պատասխանատվությունը:

### ***Պատասխանատվության սահմանափակումը***

2. Պարտադիր աուդիտ իրականացնող անձանց և աուդիտորական ընկերությունների՝ մասնագիտական պարտականությունների խախտումից բխող քաղաքացիական պատասխանատվությունը պետք է սահմանափակվի՝ բացառությամբ պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կամ աուդիտորական ընկերությունների կողմից պարտականությունների դիտավորյալ խախտման դեպքերի:

3. Պատասխանատվության սահմանափակումը պետք է կիրառվի աուդիտի ենթարկված ընկերության և ցանկացած երրորդ կողմի նկատմամբ, որոնք, ազգային իրավունքի համաձայն, փոխհատուցման պահանջ ներկայացնելու իրավունք ունեն:

4. Քաղաքացիական պատասխանատվության ցանկացած սահմանափակում վնաս կրած կողմերին չպետք է խոչընդոտի արդարացի փոխհատուցում ստանալը:

### ***Պատասխանատվության սահմանափակման մեթոդները***

5. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ պատասխանատվությունը սահմանափակելու ուղղությամբ: Այդ նպատակով, առաջարկվում է, որ հատկապես կիրառվեն ստորև նշված մեթոդներից որևէ մեկը կամ մի քանիսը.

ա) առավելագույն դրամական գումարի կամ այդ գումարի հաշվարկման բանաձևի սահմանում.

բ) սկզբունքների փաթեթի սահմանում, որոնց համաձայն պարտադիր աուդիտ իրականացնող անձը կամ աուդիտորական ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր մասով հայցվորին հասցված վնասից բացի այլ վնասների համար և, համապատասխանաբար, խախտումներ թույլ տված այլ անձանց հետ համապարտ պատասխանատվություն չի կրում.

գ) դրույթ, որը թույլ է տալիս աուդիտի ենթարկվող ցանկացած ընկերության և պարտադիր աուդիտ իրականացնող անձին կամ աուդիտորական ընկերությանը համաձայնագրով սահմանել պատասխանատվության սահմանափակումը:

6. Եթե պատասխանատվությունը սահմանափակվում է 5(գ) կետում նշված համաձայնագրով, ապա անդամ պետությունները պետք է ապահովեն հետևյալ բոլոր պահանջների բավարարումը.

ա) համաձայնագիրը ենթակա է դատական վերանայման.

բ) աուդիտի ենթարկվող ընկերության մասով, սահմանափակումը որոշվում է կուլեկտիվ հիմունքներով՝ Խորհրդի 78/660/ԵՏՀ [2] հրահանգի 50-ր հոդվածում նշված կամ, համախմբված հաշիվների աուդիտի դեպքում, Խորհրդի 83/349/ԵՏՀ [3] հրահանգի 36-ա հոդվածում նշված վարչական, կառավարման կամ վերահսկման մարմինների կողմից, իսկ այդ որոշումը հաստատվում է աուդիտի ենթարկվող ընկերության բաժնետերերի կողմից.

գ) սահմանափակումը և սահմանափակման որևէ փոփոխություն հրապարակվում են աուդիտի ենթարկված ընկերության հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

7. Նախքան 5(ա), (բ) կամ (գ) կետերում նշված մեթոդներից որևէ մեկը կամ 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերին համահունչ՝ պատասխանատվության սահմանափակման ցանկացած այլ մեթոդ կիրարկող միջոցների ընդունումը, անդամ պետությունը պետք է հաշվի առնի դրանց ազդեցությունը ֆինանսական շուկաների, ներդրողների և ցուցակված ընկերությունների համար պարտադիր աուդիտի շուկա մուտք գործելու պայմանների վրա, ինչպես նաև աուդիտի որակի, ռիսկերի ապահովագրելիության և աուդիտի ենթարկվող ընկերությունների վրա:

### *Հետագա քայլերը*

8. Անդամ պետություններին կոչ է արվում տեղեկացնել Հանձնաժողովին սույն Առաջարկության շրջանակներում ձեռնարկված բոլոր գործողությունների մասին մինչև 2010 թվականի հունիսի 5-ը:

### *Հասցեատերերը*

9. Սույն Առաջարկությունը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2008 թվականի հունիսի 5-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Չարլի ՄաքՔրիվի

Հանձնաժողովի անդամ

- 1) ՊՏ L 157, 09.06.2006թ., էջ 87: 2008/30/ԵՀ հրահանգով (ՊՏ L 81, 20.03.2008թ., էջ 53) փոփոխված հրահանգ:
- 2) ՊՏ L 222, 14.08.1978թ., էջ 11: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006/46/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 224, 16.08.2006թ., էջ 1):
- 3) ՊՏ L 193, 18.07.1983թ., էջ 1: Վերջին անգամ 2006/99/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 363, 20.12.2006թ., էջ 137):